Աշխեն Քեշիշյան

Շոշափիր կյանքը...

Շոշափիր կյանքը այնպես, ինչպես
Ձյունն է հալչում նորածիլ խոտի վրայից,
Այնպես, ինչպես երեխա ժամանակ
Արև ու տուն էիր նկարում՝
Ցուցամատդ սահեցնելով
Գոլորշապատ ապակու վրա:
Շոշափիր այնպես
Ինչպես շուրթերդ հպվում են
Ցայտաղբյուրի ջրին,
Ինչպես մյուռոնն է
Տաճարում հոսում
Նորածնի բյուրեղյա մարմնից:
Ինչպես եկեղեցում
Վառվող մոմը կաթկթում է ջրերի մեջ:
Շոշափիր, ինչպես քանդակագործի ձեռքերը
Մարմարն են հղկում
Ու տառապած հոգին
Հողն է շոյում:
Շոշափիր կյանքը,
Ինչպես թափանցիկ երազ,
Ինչպես դողացող տերև…